Եկեղեցւոյ։ Զոքաւ Արիոս 'ի Պաղեստին, այլ Մակար Հայրապետ Երուսաղէմի ոչ ընկալաւ զնա, և անտի մեկնեցաւ 'ի Նիկոմիդիա 'ի կոչ Եւսեբիոսի բարեկամին իւրոյ։

Գումարեցաւ Ժողով վասն այսր հրամանաւ Կոստանդիանոսի 318 Հայրապետաց 'ի Նիկիա Բիւթանացւոց (325)։ Զկնի Հայրապետացն Աղեքսանդրեայ, Անտիոքայ, և Հայոց, երեւելի էր և Մակար Հայրապետն Երուսաղէմի, յորոյ առնուանէ անգամ սարսէր Արիոս· քաջասիրտ հանդիսացաւ 'ի Ժողովի անդ Աթանաս Սարկաւագն եպիսկոպոսին Աղէքսանդրիայ· մերժեաց Ժողովն զվարդապետութիւնն նոր· ընկեցաւ մերժեցաւ Արիոս 'ի հաղորդութենէ Եկեղեցւոյ և հրամանաւ Կայսեր աքսորեցաւ 'ի Լիւրիկէ, և դիրք նորա մաշեցան 'ի հուր։

Իսկ Կոստանդիանոս էլ 'ի Հռոմայ, և ընտրեաց զԲիւզանդիոն քաղաք քրիստոնէից 'ի միջոց վայրի Ասիայ եւ Եւրոպայ· մեծացոյց զքաղաքն, զարդարեաց ապարանիւք, 'ի գեղեցիկ սրահի շքեղ կայսերական պալատանն կանգնեցաւ Խաչ ոսկի ընդելուզեալ ակամբք պատուականօք· գեղեցկագոյն քան զամենայն եկեղեցիսն, եկեղեցի Առաքելոցն էր։ (330 կամ 334)։

Նախ քան զորդին իւր արդէն եղեալ էր 'ի պալատանէն Դշխոյն Հեղինէ 79 ամեայ գնալ 'ի Պաղեստին, ուր եդիտ ձեռնտու և օգնական իւր զՄակար Հայրապետ Երուսաղէմի, և բուռն հար գտանել սրբել զՏնօրինական Ս· Տեղիսն, որ պղծեալ և ծածկեալ էին հեթանոսական պաշտամամբք· երարձ զարձանս կռոց զեղեալսն յԱդրիանոսէ· եդիտ զԳերեզմանն Ս· եւ զայլ տեղիս (326)։ Ապա զհետ եղեւ խնդրել փափաքելի տենչմամբ զկենսատու փայտ Խաչին Քրիստոսի ծածկեալն 'ի Հրէից, եւ 'ի հարցանել խոշտանգանօք զխորամանկ Հրէայսն ցուցանել զտեղի Սրբոյ Խաչին, նոքա յառաջ մատուցին զՅուդա իբրեւ առաւել տեղեկագոյն հնութեան։ Այս Յուդա էր ազգաւ Հրէայ բնակեալ 'ի Պաղեստին հանդերձ մարբ իւրով Աննայիւ, և էր ինքն ծանուցեալ 'ի մէջ Հրէից իբրև այր առաքինի և բարի 'ի կարգի աւանդապահ Եբրայեցւոց և աւանդութեամբ առանձին ցեղին իւրոյ համարեալ էր յազգականութենէ տանն Ս· Ստեփաննոսի նախավկայի,